



**ՈՐԻՇ ՆՆԱՐ ՀԿԱ**

*Պատշ 2արվի միտի,  
Ուրիշ հնար չկա:  
Պատշ Եւարվի միտի,  
Ուրիշ հնար չկա:  
Նախնյաց սուրբ հավատի  
Մասունքների դիմաց  
Ծունկե ծալվի միտի,  
Ուրիշ հնար չկա:  
Եթե սիրսդ սիրս է,  
Սիրո ճամփի վրա  
Խելագարվի միտի,  
Ուրիշ հնար չկա:  
Նոսու կրվի միտի,  
Ուրիշ հնար չկա:  
Բախսու կրվի միտի,  
Ուրիշ հնար չկա:  
Խավարն ինչքան էլ խուլ  
Վերջու միտի ցրվի,  
Լոյսու փոսի միտի,  
Ուրիշ հնար չկա:  
Ինչքան խառն ու խրթին,  
Ինչքան էլ բարդ ու բիրս,  
Կյանքն աղբյուրի միտի,  
Ուրիշ հնար չկա:  
Ձիրու սրվի միտի,  
Ուրիշ հնար չկա:  
Սիսու սրվի միտի,  
Ուրիշ հնար չկա:  
Եթե բառու հոգուդ  
Ակնամունն են խանդուն,  
Երգու ցրվի միտի,  
Ուրիշ հնար չկա:  
Իսկ եթե երգի գլխին  
Կայծակներ են լայրթուն,  
Երգու կրվի միտի,  
Ուրիշ հնար չկա:*

ՆԱՍՈ ՍԱՀՅԱՆ

ՉՈՐԵՔՆԱԲԹԻ, 13 ՀՈՒՆՎԱՐԻ 2016Թ.  
№ 1 (377)  
**Սյունյաց երկիր**  
www.syuniacyerkir.am



# Մ2 մայրուղու Շինուհայրի խաչմերուկ- Հարժիսի խաչմերուկ հափվածում արտակարգ իրավիճակ էր



## Քաջարանի թիվ 1 միջնակարգ դպրոցը նշեց 50-ամյակը

Հաճելի հիշողություններ, երջանկության արցունքներ, անցած ճանապարհի արժեւորում, ձեռք բերած հաջողությունների հպարտությամբ արձանագրում. սա էր Քաջարանի թիվ 1 միջնակարգ դպրոցի 50-ամյակին նվիրված միջոցառման խորհուրդը: 1965թ. սեպտեմբերի 1-ին շահագործման հանձնված դպրոցում կազմավորվեց 24 դասարան՝ 682 աշակերտով: 50 տարվա ընթացքում դպրոցն ունեցել է շուրջ 2670 շրջանավարտ, այդ թվում՝ 33 մեդալակիր, որից 22-ը՝ ոսկե, 11-ը՝ արծաթե: 2015թ. տվյալներով դպրոցում աշխատում է 44 ուսուցիչ եւ սովորում 562 աշակերտ:

## 2016 թվականը՝ Աստուծո օրհնությամբ

### Ավանդույթ

2015թ. դեկտեմբերի 31-ին Տաթևի վանքը հերթական անգամ դարձել էր Սյունիքի տարածքային իշխանության եւ տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես եւ Հայաստանի զինված ուժերի 1-ին բանակային կորպուսի ներկայացուցիչների ու Հայ առաքելական եկեղեցու Սյունյաց թեմի բարձրաստիճան հոգեւորականների հավաքատեղի:

Հավաքը, ինչպես մեկ տարի առաջ, կազմակերպել էին Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը եւ Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ Մակար վարդապետ Հակոբյանը:  
Վանքի Սուրբ Պողոս-Պետրոս եկեղեցուն մատուցվեց հանրապետական մաղթանք՝

զվխավորությամբ Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ Մակար վարդապետ Հակոբյանի:  
Հավաքվածները միասնական աղոթք բարձրացրին առ Աստված՝ խնդրելով, որ Տերը օրհնություն բաշխի հայ ժողովրդին, խաղաղություն պարգևի Հայաստանին եւ Արցախ աշխարհին, որ ավելի զորանա Հայաստանի Հանրապետությունը:  
Երկու տարվա սահմանագծում այդպես հավաքվելու ավանդույթը նաեւ այլ խորհուրդ ունի՝ վերստին արտահայտել հավատը Հայր Աստծո, նրա որդու եւ Սուրբ հոգու հանդեպ, ինքնամաքվել եւ մեղքերի թողություն խնդրել Բարձրալից, ոգի առնել Սիսական տան բոլոր վանքերի գլուխ եւ շնորհաբաշխության աղբյուր Տաթևի վանքից, արտահայտել Սյունիքի հոգեւոր եւ աշխարհիկ իշխանությունների ու զինական ուժի միասնությունը:  
Այնուհետեւ տեղի ունեցավ մատաղի արարողություն, որի ընթացքում ներկաները շնորհավորեցին միմյանց Ամանորի եւ Սուրբ ծննդի առիթներով:



ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ



## Մ2 մայրուղու Շինուհայրի խաչմերուկ-Յարժիսի խաչմերուկ հարվածում արտակարգ իրավիճակ էր

«Այունյաց երկիր» ստեղծագործական խումբը հունվարի 5-ի առավոտվանից Մ2 միջպետական ճանապարհի Շինուհայրի խաչմերուկ-Յարժիսի խաչմերուկ հատվածում էր:

Երրորդ օրն է, ինչ մայրուղու այդ հատվածում գրեթե անանցանելի վիճակ է: Հունվարի 2-ի օրվա վերջին սկիզբ առած ձյունամորիկն ավելի է սաստկացել հունվարի 3-ին, 4-ին, իսկ հունվարի 5-ին շարունակվում էր: Ձյունամորիկն առավել ուժգին էր եռաբլրի սարահարթի ամենաբարձր հատվածում՝ Շինուհայրի խաչմե-

Սուրբ ծննդի կապակցությամբ որքան ակտիվ էր մեքենաների երթևեկությունը դեպի Երեւան կամ հակառակ ուղղությամբ: Մայրուղու՝ Գորիսից դուրս եկող հատվածում ուստիկանական անցակետ էր, որն արգելում էր մեքենաների հետագա ընթացքը, որպեսզի մի քանի կիլոմետր այն կողմ չհայտնվեն ծնաբքի մեջ կամ ձյան տակ: Ուստիկանական անցակետում հունվարի 4-ից կուտակված էին Լեռնային Ղարաբաղից, Կապանից, Մեղրուց, Իրանից եկող հարյուրավոր մեքենաներ: Իսկ Շինուհայրի խաչմերուկից մոտ 1 կմ վերեւ իսկական մարտ էր ձյունամորիկի ու մարդկանց միջեւ: Այնտեղ էին մար-

Սուրեն Խաչատրյանը:  
**«Մեզ հետ գրույցում մարզպետը մասնավորապես ասաց. «Փրկարարական աշխատանքները չեն դադարել ամբողջ գիշերվա ընթացքում: Խնդիրը հետեւյալն էր՝ նախ մարդկանց հանել ձյան տակ մնացած մեքենաներից եւ ապահովել նրանց անվտանգությունը. այդ խնդիրը լուծեցինք հունվարի լույս 5-ի գիշերը՝ ժամը 2-3-ի սահմաններում, իսկ հետո դուրս բերել ձյունաթաղ մեքենաները»:**

Աշխատանքները բարդանում էին նաեւ այն պատճառով, որ տեսանելիությունը տեղ-տեղ հաճախ հասնում էր մեկ-երկու մետրի՝ ձյունամորիկի պատճառով: Եվ, այդ բոլորով հանդերձ, ձյունահավաք տեխնիկան ու փրկարարները համառորեն մետր առ մետր առաջ էին գնում՝ մաքրելով ձյունահյուսերը, դուրս բերելով ձյունասույզ մեքենաներ: Հունվարի 5-ին՝ ժամը 15-ի սահմաններում, մայրուղով մեքենաների երթևեկությունն աստիճանաբար վերսկսվեց: Աշխատանքները, սակայն, չէին դադարում, քանի որ փոթորիկը շարունակվում էր: Մինչ այդ՝ ժամը 13-ի սահմաններում, հայտնի դարձավ, որ ձյունախեղդ վիճակում գտնվել է Կիմ Հովսեփյանի մարմինը. նա անհետացել էր հունվարի 3-ին, ում գտնելու համար երեք օր շարունակ փրկարարական-որոնողական աշխատանքներ էին իրականացնում Գորիսի տարածաշրջանի ոստիկաններն ու փրկարարները:

**ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ  
5 հունվարի 2016թ.**



րուկ-Յարժիսի խաչմերուկ հատվածում: Ավանդաբար հենց այդ հատվածն է վտանգավոր դառնում ձյունառատ տեղումներից հետո: Մ2 մայրուղին, առանց չափազանցության, հանրապետության ռազմավարական մայրուղիներից է: Այդ ճանապարհով է մայրաքաղաքը կապված Արցախի եւ հանրապետության հարավային շրջանների, ինչպես եւ Իրանի Իսլամական Հանրապետության հետ: Եվ դժվար չէ պատկերացնել, թե Ամանորի եւ

զի փրկարարների երեք մարտական հաշվարկ (մոտ 20 մարդ), «Ումար» ճանապարհաշինական ընկերության ձյունահավաք ամբողջ տեխնիկան՝ ընկերության տնօրեն Արթուր Մարտիրոսյանի գլխավորությամբ: Այնտեղ էին ոստիկանության, շտապօգնության ներկայացուցիչները, Գորիսի քաղաքապետ Վաչագան Աղունցը: Հունվարի 4-ին եւ 5-ին փրկարարական աշխատանքները տեղում ղեկավարում էր Սյունիքի մարզպետ

## Ախպրանիշը՝ անձեռնհասություն եւ անարարություն

Մի՞թե Կապանի քաղաքապետարանում չգտնվեց իրավասու գոնե մեկը, որ տոնական օրերին կազմակերպեր համայնքի փողոցների ու մայրերի քիչումիչ մաքրումը տեղացած առատ ձյունից:

Ոչինչ, որ մարդիկ ու մեքենաները դժվարությամբ էին երթևեկում այդ օրերին: Մի կերպ կարելի էր հաղթահարել ստեղծված վիճակն ու յուրազանցել: Կարելի էր նույնիսկ դրություն մտնել եւ հասկանալ, որ քաղաքապետն ու յուր փնտրած, գտած ու երկու ապահով ծածկոցի տակ հանգրվանած քենակալն ի վիճակի չեն կառավարել քաղաքի կոմունալ տնտեսությունը մի փոքր անսովոր իրավիճակում:

Բայց... Փուչիկներն էին ափսոս, գույնզգույն, դժվարությամբ ձեռք բերված փուչիկները, որ այդքան հեշտությամբ մեկ-երկու օրում պայթեցին՝ «Լավագույն քաղաքային համայնք», «Տարվա քաղաքապետ»:

Բա ի՞նչ ենք անելու առանց այդ փուչիկների:

Բա ինչպե՞ս ենք ծածկելու պեծին-պեծին տվող մեր ճակատն առանց դափնու ճյուղերի:

Մյուս կողմից՝ բնությունն էլ, կարծես, անհավասարակշիռ ու տարօրինակ է դարձել. կարող էր չէ՞ հաշվի առնել Կապանին ու նրա քաղաքապետին տրված վերջին գնահատանքները, հաշվի առնել, որ քաղաքապետը հանգստանում է ու շրջանցեր՝ ձյան տեղումներն ուղղելով այլ համայնքների վրա, բայց...



Յետո, մարդիկ էլ մի տեսակ անհանդուրժող են դարձել. տեղումներից օրեր անց ձնահավաք մեքենան դուրս է եկել փողոցները մաքրելու, բայց դժգոհ ենք դարձյալ: Կարող էր չէ՞ մեքենավարն ընդհանրապես դուրս չգալ եւ նույնիսկ արժանանալ քաղաքապետարանի մեդալի կամ Կապանի պատվավոր քաղաքացու կոչման: Բայց մեծահոգաբար դուրս է եկել, իսկ մենք չենք գնահատում այդ վեհամծնությունը:

Այ, օրինակ, հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարներից գրեթե ոչ մեկը չի փորձել գոնե սեփական ուժերով մաքրել իր ոտատեղն ու աշխատավայրի բակը, եւ նրանց ոչ ոք չի անհանգստացնում: Ինչեւէ, հուսանք, որ տոնական եւ ոչ աշխատանքային օրերին, ինչպես եւ քաղաքապետի հանգստանալու օրերին ու ժամերին այլեւս ու երբեք Կապանում ձյուն չի տեղա...  
**ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

## Փաստաբանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 2 հոդվածով. նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը

ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչության վարույթում քննվող քրեական գործով փաստաբանին մեղադրանք է առաջադրվել խոշոր չափերով խարդախության եւ քրեական գործով դատաքննության ընթացքում խոշոր չափերով կաշառք տալու փորձի դրդյունքում համար:

Սյունիքի մարզի 46-ամյա բնակչուհուց ղեկավարվող 9-ին գրավոր հաղորդում է ստացվել, որ հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող իր որդուն ազատազրկման հետ չկապված պատիժ նշանակելու համար կաշառք տալու պատրվակով փաստաբանը պահանջել է գումար:

Ըստ դիմումատուի՝ 2015թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին փաստաբանն իրենից պահանջել է ստացել է ընդհանուր առմամբ 1.000.000 ՀՀ դրամ գումար՝ համապատասխան պաշտոնատար անձանց՝ դատախազին եւ դատավորին, կաշառք տալու համար, սակայն խարդախությամբ նշված գումարը հափշտակել է: Քաղաքացու հաղորդման հիման վրա 2015թ. դեկտեմբերի 9-ին հարուցվել է քրեական գործ, որով

նախաքննությունն իրականացվում է Սյունիքի մարզային քննչական վարչության վարույթում: Ձեռք բերված ապացույցների հիման վրա՝ 2015թ. դեկտեմբերի 14-ին փաստաբանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով եւ 34-38-312-րդ հոդվածի 2-րդ մասով: Նույն օրը քննիչը միջնորդություն է ներկայացրել Սյունիքի մարզի առաջին աստիճանի դատարան՝ նրա նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորումը կիրառելու վերաբերյալ, ինչը բավարարվել է: Նախաքննությունը շարունակվում է, ձեռնարկվում են անհրաժեշտ քննչական գործողություններ՝ դեպի բոլոր հանգամանքների բազմազուտման ապահովելու ուղղությամբ: **Ծանուցում.** Ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:  
**investigative.am, 14.12.2015**

# «Դանդի փրիշա մեթալս Կապան» ՓԲԸ-ի փարեկան հաշվետվությունը

## Հանգստություն

Դեկտեմբերի 18-ին Կապանի մշակույթի պալատի փոքր դահլիճում «Դանդի փրիշա մեթալս Կապան» ՓԲԸ-ի ընկերության գլխավոր տնօրեն Յուրայ Ջաբրայանը հանդես եկավ տարեկան հաշվետվությամբ: Նախքան դրան անցնելը տնօրենը եւս մեկ անգամ հիշեցրեց այն գործելաոճը, որ տարիներ շարունակ որդեգրել են, այն է՝ թափանցիկ գործունեություն՝ համայնքի ներկայացուցիչների ընդգրկմամբ:

Մի փոքր շեղվելով հանդիպման բուն նպատակից՝ ներկայացրեց մեկ րոպե լուրջ պատահարի դեպքում է կանգնեցվել ձեռնարկության աշխատանքը, ինչը պատահարի մասին զեկուցվել է, բայց աշխատանքը չի կանգնեցվել:

Անվտանգ աշխատելաոճն աշխատանքի հիմնական նախապայմաններից մեկը համարելով՝ տնօրենը նշեց, որ անվտանգության կանոնների պահպանմանը բավականին մեծ ուշադրություն են դարձրել եւ կդարձնեն: Ըստ այդմ՝ 2015թ. նոյեմբերի դրությամբ ընդամենը վեց լուրջ պատահարի դեպքում է կանգնեցվել ձեռնարկության աշխատանքը, ինչը պատահարի մասին զեկուցվել է, բայց աշխատանքը չի կանգնեցվել:

2015թ. առաջին 3 եռամսյակին արտադրված հանքաքարը կազմել է 322 հազար 178 տոննա, վերամշակված հանքաքար՝ 319 հազար 719 տոննա, դատարի ապարի գոյացում՝ 219 հազար 336 տոննա, արտադրված ոսկի՝ 18 հազար 597 ունցիա, արտադրված արծաթ՝ 341 հազար 608 ունցիա, արտադրված պղնձի խտանյութը՝ 4265 տոննա, ցինկը՝ 6901 տոննա:

Առաջին ինն ամսվա դրությամբ ընկերությունը 6 մլն 820 հազար 405 դոլարի վնաս է կրել՝ պայմանավորված միջազգային շուկայում ոսկու և պղնձի գների անկմամբ: Ընկերության տնօրենը տեղեկացրեց, որ ոսկու գինը 2015թ. հունվարից մինչև նոյեմբեր 21 տոկոսով նվազել է, իսկ 2011թ. մայիսի համեմատ՝ 68 տոկոսով, պղնձի գինը 2015թ. հունվարից մինչև նոյեմբեր նվազել է 44 տոկոսով, իսկ 2011թ. մայիսից՝ 216 տոկոսով: 2015թ. առաջին երեք եռամսյակի կտրվածքով խտանյութի վաճառքը տվել է 25 մլն դոլարի նվազում: 2015թ. առաջին 11 ամսվա ընթացքում պետությանը վճարել են 3 մլրդ 170 մլն 228 հազար դրամ հարկ: Ի դեպ, որոշ տվյալներ ներկայացվել են 2011թ. մայիս ամսվա տվյալների համեմատ, քանի որ Յուրայ Ջաբրայանը ընկերությունում սկսել է աշխատել այդ ժամանակահատվածից:

2015թ. հունվարից հոկտեմբեր ամիսների ընթացքում կորպորատիվ, սոցիալական պատասխանատվությանն ուղղված ծրագրերի չրջանակներում նվիրատվության համար հատկացվել է 98 մլն 56 հազար դրամ, անցյալ տարի այդ քիվը կազմել է 180 մլն դրամ, մինչև տարվա վերջ այդ քիվը հնարավոր է հասնի մինչև 120 մլն դրամի: Համայնքային ենթակառուցվածքի հատկացվել է 47 մլն 311 հազար դրամ, մշակութային, կրթական եւ առողջապահական աջակցության համար՝ մոտ 16 մլն դրամ, համայնքում իրականացված այլ ներդրումները՝ 35 մլն դրամ: 2015թ. ընկերության իրականացրած



Որպես հաջողությունը նշվեցին նաեւ ձեռնարկությունում միջամտային հարաբերությունների բարելավումը եւ շահառուների աջակցությունը:

Յուրայ Ջաբրայանի հավաստմամբ՝ երբ 2011թ. նա եկավ այս ձեռնարկություն որպես վարչական տնօրեն, 26 օտարերկրացի աշխատակից կար, այսօր 11-ն է, իսկ ղեկավար անձնակազմում ընդամենը 2 օտարերկրացի է, մնացած 11 հոգին կապանցիներ են: «Ընկերության հաջորդ ղեկավարը ղափանցի պիտի ըլլա», – նշեց Յ.Ջաբրայանը:

2015թ. միջազգային շուկայում մետաղի գների անկմանը՝ այնուհանդերձ ձեռնարկությունը մեծ թվով աշխատակիցներ չի կրճատել. նոյեմբեր ամսվա դրությամբ ընկերությունում աշխատում է 1185 հոգի, սեպտեմբերին 1206 էր, իսկ տարվա սկզբին՝ 1166: Տնօրենը հավաստիացրեց, որ եկող տարում նախատեսվում է այդ քիվը կայուն պահել, այսինքն՝ մոտ 1200: 47 աշխատակցի տարբեր պատճառներով, հիմնականում անվտանգության կանոնների խախտումով պայմանավորված, ազատել են աշխատանքից, 111 հոգի սեփական դիմումի համաձայն է ազատվել, մեծ մասամբ արտագաղթի պատճառով, 177 հոգի այս տարի աշխատանքի է ընդունվել: Միջին աշխատավարձը, ղեկավար անձնակազմի աշխատավարձը չհաշված, կազմում է 243 հազար 616 դրամ, իսկ ստորգետնյա աշխատողների, թվով մոտ 400 հոգի, միջին աշխատավարձը կազմում է 315 հազար 616 դրամ:

2015թ. հունվարից հոկտեմբեր ամիսների ընթացքում կորպորատիվ, սոցիալական պատասխանատվությանն ուղղված ծրագրերի չրջանակներում նվիրատվության համար հատկացվել է 98 մլն 56 հազար դրամ, անցյալ տարի այդ քիվը կազմել է 180 մլն դրամ, մինչև տարվա վերջ այդ քիվը հնարավոր է հասնի մինչև 120 մլն դրամի: Համայնքային ենթակառուցվածքի հատկացվել է 47 մլն 311 հազար դրամ, մշակութային, կրթական եւ առողջապահական աջակցության համար՝ մոտ 16 մլն դրամ, համայնքում իրականացված այլ ներդրումները՝ 35 մլն դրամ: 2015թ. ընկերության իրականացրած

ամենամեծ սոցիալական ծրագիրն էլեկտրոնային գրադարանի համար հատկացված 40 մլն դրամն է: 2016թ. սոցիալական ծրագրերից խոսելիս Յուրայ Ջաբրայանը նշեց, որ քաղաքում մոտ մանկապարտեզ կառուցելու 200 մլն դրամ արժողությամբ երկամյա ծրագիրն է, որտեղ կհաճախի մոտ 140 երեխա, եւ 33 աշխատատեղ կստեղծվի:

2015-ին տարվա լավագույն աշխատակից ճանաչված Անդրանիկ Աղաջանյանն ստացավ 1 մլն դրամ, երկրորդ տեղին արժանացած Սլավիկ Պետրոսյանը՝ 500 հազար դրամ, իսկ եւս հինգ աշխատակից էլ՝ 100 հազարական դրամ:

Բացի աշխատանքից՝ տարվա ընթացքում կազմակերպվել են նաեւ տարբեր ժամանցային միջոցառումներ:

Ձեկույցի ավարտից հետո «Կայուն զարգացում» հիմնադրամի կողմից Փարսադանյանը հարցրեց աշխատավարձի եւ Ջանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատ աշխատողների տեղափոխման մասին: Հարցին ի պատասխան՝ Յ.Ջաբրայանը նշեց, որ աշխատավարձն այս տարի 7-8 տոկոսով աճել է, իսկ 2011թ. մայիսից մինչև 2015թ. ապրիլ՝ 38 տոկոսով: Ինչ վերաբերում է աշխատողների տեղափոխվելուն, ապա դա մտահոգիչ չէ, քանի որ 4-5 հոգի է գնացել:

Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիրի տնօրեն Ռիտա Դավթյանը շնորհակալություն հայտնեց Յուրայ Ջաբրայանի վերաբերմունքի, հոգածության համար եւ նշեց, որ երեխաները միշտ սպասում են նրան: ՀԱՕԿ Մյունիխի մարզային ներկայացուցչության տնօրեն Արշակ Սարգսյանը, «Ողջի» հիմնադրամի կողմից մշակույթի ծրագրերի շրջանակում նվիրատվության համար հատկացվել է 98 մլն 56 հազար դրամ, անցյալ տարի այդ քիվը կազմել է 180 մլն դրամ, մինչև տարվա վերջ այդ քիվը հնարավոր է հասնի մինչև 120 մլն դրամի: Համայնքային ենթակառուցվածքի հատկացվել է 47 մլն 311 հազար դրամ, մշակութային, կրթական եւ առողջապահական աջակցության համար՝ մոտ 16 մլն դրամ, համայնքում իրականացված այլ ներդրումները՝ 35 մլն դրամ: 2015թ. ընկերության իրականացրած

ամենամեծ սոցիալական ծրագիրն էլեկտրոնային գրադարանի համար հատկացված 40 մլն դրամն է: 2016թ. սոցիալական ծրագրերից խոսելիս Յուրայ Ջաբրայանը նշեց, որ քաղաքում մոտ մանկապարտեզ կառուցելու 200 մլն դրամ արժողությամբ երկամյա ծրագիրն է, որտեղ կհաճախի մոտ 140 երեխա, եւ 33 աշխատատեղ կստեղծվի:

2015-ին տարվա լավագույն աշխատակից ճանաչված Անդրանիկ Աղաջանյանն ստացավ 1 մլն դրամ, երկրորդ տեղին արժանացած Սլավիկ Պետրոսյանը՝ 500 հազար դրամ, իսկ եւս հինգ աշխատակից էլ՝ 100 հազարական դրամ:

Բացի աշխատանքից՝ տարվա ընթացքում կազմակերպվել են նաեւ տարբեր ժամանցային միջոցառումներ:

Ձեկույցի ավարտից հետո «Կայուն զարգացում» հիմնադրամի կողմից Փարսադանյանը հարցրեց աշխատավարձի եւ Ջանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատ աշխատողների տեղափոխման մասին: Հարցին ի պատասխան՝ Յ.Ջաբրայանը նշեց, որ աշխատավարձն այս տարի 7-8 տոկոսով աճել է, իսկ 2011թ. մայիսից մինչև 2015թ. ապրիլ՝ 38 տոկոսով: Ինչ վերաբերում է աշխատողների տեղափոխվելուն, ապա դա մտահոգիչ չէ, քանի որ 4-5 հոգի է գնացել:

Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիրի տնօրեն Ռիտա Դավթյանը շնորհակալություն հայտնեց Յուրայ Ջաբրայանի վերաբերմունքի, հոգածության համար եւ նշեց, որ երեխաները միշտ սպասում են նրան: ՀԱՕԿ Մյունիխի մարզային ներկայացուցչության տնօրեն Արշակ Սարգսյանը, «Ողջի» հիմնադրամի կողմից մշակույթի ծրագրերի շրջանակում նվիրատվության համար հատկացվել է 98 մլն 56 հազար դրամ, անցյալ տարի այդ քիվը կազմել է 180 մլն դրամ, մինչև տարվա վերջ այդ քիվը հնարավոր է հասնի մինչև 120 մլն դրամի: Համայնքային ենթակառուցվածքի հատկացվել է 47 մլն 311 հազար դրամ, մշակութային, կրթական եւ առողջապահական աջակցության համար՝ մոտ 16 մլն դրամ, համայնքում իրականացված այլ ներդրումները՝ 35 մլն դրամ: 2015թ. ընկերության իրականացրած

ամենամեծ սոցիալական ծրագիրն էլեկտրոնային գրադարանի համար հատկացված 40 մլն դրամն է: 2016թ. սոցիալական ծրագրերից խոսելիս Յուրայ Ջաբրայանը նշեց, որ քաղաքում մոտ մանկապարտեզ կառուցելու 200 մլն դրամ արժողությամբ երկամյա ծրագիրն է, որտեղ կհաճախի մոտ 140 երեխա, եւ 33 աշխատատեղ կստեղծվի:

## 2016 թվականից կսկսվեն «Ջանգեզուր» կենսոլորտային համալիրի քարտեզագրման աշխատանքները

2016 թվականից կսկսվեն «Ջանգեզուր» կենսոլորտային համալիրի քարտեզագրման աշխատանքները: Այս մասին ԷկոԼոգի հետ զրույցում հայտնեց «Ջանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրեն Կարեն Կիրակոսյանը:

«Ջանգեզուր» կենսոլորտային համալիրը ստեղծվեց 2013թ. եւ ընդգրկեց տարբեր պահպանման ռեժիմներ ունեցող բնության հատուկ պահպանվող տարածքներ՝ «Շիկահող» պետական արգելոցը, «Արեւիկ» ազգային պարկը, «Սոսու պուրակ», «Ջանգեզուր», «Խուստուփ», «Բողաքար» եւ «Սեւ լիճ» պետական արգելավայրերը: Համալիրի ստեղծման համար ԿՖՎ գերմանական զարգացման բանկը խոստացել է 8.25 միլիոն եվրո տրամադրել:

«Մենք մեր գործողությունների պլանում մյուս տարի հստակ դրել ենք «Ջանգեզուր» կենսոլորտային համալիրի քարտեզագրման աշխատանքների սկիզբը: Աշխատանքները նախատեսված է ավարտել 2017թ.: Խոսքը մոտ 80.000 հեկտարի մասին է, ինչը բավականին մեծ տարածք է», – ասաց Կարեն Կիրակոսյանը:

Ըստ ՊՈԱԿ-ի տնօրենի՝ ԿՖՎ բանկը նախատեսում է առաջին գումարային փոխանցումները կատարել 2016թ. փետրվար-մարտ ամիսներին: «Սա ոչ միայն «Ջանգեզուր» կենսոլորտային համալիրին ուղղված գումարն է: Այդ գումարի մեջ կա նաեւ սոցիալ-տնտեսական բոլոր համալիրին հարակից համայնքների զարգացման համար: Մենք պետք է օգնենք մարդկանց եւ այնպիսի ծրագրեր իրականացնենք, որ ստեղծվեն աշխատատեղեր», – ասաց Կարեն Կիրակոսյանը:

Ի պատասխան հարցի՝ արդյոք ընդգրկված են հանքավայրեր համալիրի սահմանների մեջ, Կարեն Կիրակոսյանը պատասխանեց. «Մեր տարածքում հանքավայրեր չկան»:

Մեր կողմից նշենք, որ «Ջանգեզուրի» կենսոլորտային համալիրի մեջ մտած ԲՀՊՏ-երի նախկին սահմանների համաձայն՝ Մեղրասարի ոսկու հանքավայրի մոտ 60%-ը գտնվում է «Արեւիկ» ազգային պարկի տարածքում, Լիճքի պղնձի հանքավայրը «Արեւիկ» ազգային պարկից հեռու է լինելու ընդամենը 780 մետր: Իսկ «Գեղի Գոլը» եւ «Լեռ-Էքս» ընկերությունները նախատեսում են օգտակար հանածոներ որոնել Գեղի գետի ավազանում...

Հիշեցնենք նաեւ, որ տույն թվականի հուլիսի 2-ին ՀՀ կառավարությունն ընդունեց 731-Ն որոշումը, որով 630.6541 հեկտարով կրճատվեց «Ջանգեզուր» կենսոլորտային համալիրի տարածքը: Մասնավորապես հողատարածքներ կրճատվեցին «Ջանգեզուր» կենսոլորտային համալիրի տարածքի մեջ ընդգրկված «Արեւիկ» ազգային պարկի եւ «Ջանգեզուր» պետական արգելավայրի տարածքներից: 25 դեկտեմբերի 2015թ.

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Նեատարձ հայացք

# Այունիքի մարզը 2015 թվականին. ուշագրավ իրադարձություններ

- Լրացավ արձակազիր Սուրեն Այվազյանի 100-ամյակը: Նրա ծննդյան օրը՝ հունվարի 9-ին, գրողի շիրմաքարի մոտ տեղի ունեցավ արարողություն, եւ արժանին մատուցվեց մեծ հալի, սյունեցուն, գրողին: Իսկ նոյեմբերի 2-ին Խնձորեսկի Գ.Սեւունցի անվան միջնակարգ դպրոցում տեղի ունեցավ արհուրյան դաս՝ նվիրված Սուրեն Այվազյանին:
- Հունվարի 29-ին Որոտնավան-

քուն տեղի ունեցավ ժամերգություն եւ գովաբանական աղոթք՝ ուղղված Սուրբ Հովհան Որոտնեցուն՝ ծննդյան 700-ամյակի կապակցությամբ:

- Լույս տեսան «Այունյաց երկրի» բացառիկ համարներ՝ նվիրված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին (15 ապրիլի 2015թ., N10), Ամենայն հայոց 101-րդ կաթողիկոս, տիեզերահռչակ ու բազմապատիկ լուսավորիչ հայոց, վերստին նո-



«Մեղրու ՃՇՇԶ» ՍՊ ընկերությունը (տնօրեն՝ Ազատ Գասպարյան) 2015թ. փետրվարի 19-ին արժանացավ ՀՀ կառավարության մրցանակի: Հոկտեմբերի 23-ին Մեղրու ճանապարհաշինարարներն արժանացան Նոր մրցանակի՝ «Քաղաքաշինական եւ ճանապարհաշինական շինարարության բնագավառում առաջատար ընկերություն» անվանակարգի «Մերկուրի» մրցանակի: Այդ ընկերության ջանքերով հիմնանորոգվեց Մ2 մայրուղու՝ 2535 մ բարձրության վրա գտնվող Դիբազի լեռնանցքով անցնող հատվածը: Ընկերությունը նախատեսված ժամկետում ավարտեց Մեղրու փարածաշրջանային հիվանդանոցի կառուցումը:



ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը հոկտեմբերի 13-ին աշխատանքային այցով եղել է Սյունիքի մարզում: Նախագահը ծանոթացել է Շաքե-Սիսիան-Տոլորս ճանապարհի շինարարության ընթացքին, «Քոն-թուր գլոբալ հիդրոկասկադ» ընկերության գրասենյակի բացման արարողությանը: Կապանում այցելել է թիվ 2 ավագ դպրոց, ապա մասնակցել քաղաքի բժշկական արդիականացված կենտրոնի բացման արարողությանը: Այցելել է նաև քաղաքի կառուցապատված եւ բարեկարգված կենտրոնական հրապարակ:



ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանը նոյեմբերի 21-ին աշխատանքային այցով եղել է Սյունիքի մարզում: Այցը մեկնարկել է Սյունիքի մարզի Մեղրի քաղաքից: Կառավարության ղեկավարն Ազարակ քաղաքում ներկա է գտնվել Ազարակի հիմնանորոգված արվեստի դպրոցի բացմանը: Աշխատանքային այցի շրջանակներում կառավարության ղեկավարը հանդիպել է Մեղրի, Ազարակ, Կապան եւ Սիսիան քաղաքների բնակիչներին, ծանոթացել նրանց հուզող եւ առաջնահերթ լուծում պահանջող խնդիրներին:

րոզող Սուրբ Էջմիածնի, հայոց ազգային-եկեղեցական վերջին սուրբ Մովսես Գ Տաթևացուն (11 սեպտեմբերի 2015թ., N23) եւ 20-րդ դարի 2-րդ կեսի հայ արձակ նահապետ Սերո Խանգադյանին (3 դեկտեմբերի 2015թ., N32):

- Սյունիքում նշվեց Ջորավար Անդրանիկի ծննդյան 150-ամյակը: Փետրվարի 25-ին այդ կապակցությամբ միջոցառումներ տեղի ունեցան Կապանում, Գորիսում, Սիսիանում եւ Մեղրիում:
- Կապանի Ալ. Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոնը դարձավ 80 տարեկան:
- Ապրիլի 23-24-ին մարզի գրեթե բոլոր բնակավայրերում տեղի ունեցան հիշատակի արարողություններ եւ ամփոփվեցին Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները:
- Կապանում սեպտեմբերի 5-ին բացվեց «Ֆենիքս» ժամանցային-առողջարարական նոր կենտրոն:
- Մայիսի 17-ին Գորիսի շրջանի Շինուհայր, Տաթև, Հալիծոր, Հարժիս, Սվարանց, Խոտ, Տանձատափ, Քաշունի գյուղերում անցկացվեց տեղական համրաբվե: Հանրաբվելի էր դրված հետևյալ հարցը՝ «Համաձայն էք, որպեսզի Շինուհայր, Տաթև, Հալիծոր, Սվարանց, Խոտ, Տանձատափ, Քաշունի համայնքները միավորվեն Տաթև համայնք անվամբ, Շինուհայր համայնքային կենտրոնով»: Ութ գյուղի ընտրողների 94,2 տոկոսն «այո» պատասխանեց համրաբվելի դրված հարցին: ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը 2015թ. դեկտեմբերի 15-ին ստորագրել է օրենք, որի համաձայն՝ Տաթև համայնքի մեջ այսուհետ մտնում են վերոնշյալ գյուղերը:
- Մայիսի 27-ին ՀՀ նշակույթի նախարարության «Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի նախաձեռնությամբ Տաթևում անցկացվեց գիտաժո-



Ապրիլի 2-ին Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում տեղի ունեցավ Սպարապետ Վազգեն Սարգսյանի կիսանդրու բացումը:



Մայիսի 9-ին մարզում նշվեց Մեծ հայրենականում փարած հաղթանակի 70-ամյակը: Իսկ ԱՊՀ երկրների արտաքին սահմանների երկայնքով անցկացվող միջազգային էստաֆետը՝ նվիրված Մեծ հայրենականի հաղթանակի 70-ամյակին, որ մեկնարկել էր փետրվարի 2-ին հերոս քաղաք Բրեստի ամրոցից, հասավ Մեղրու սահմանապահ ջոկատ: Ի դեպ, Մեղրու սահմանապահ ջոկատը դարձավ 60 փարեկան. հորեյանական միջոցառումը տեղի ունեցավ հունիսի 10-ին:

ղով «Տաթևի վանքը՝ հոգեւոր, մշակութային եւ դպրոցային կենտրոն» թեմայով:

- 2015թ. հունիսի 8-ին ստորագրվեց «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» ընկե-

րության գույքի առուվաճառքի փոփոխված եւ լրամշակված պայմանագիրը՝ Հայաստանի Հանրապետության, «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր», «Քոնթրոլ



- գլոբալ տերրա հոլդինգս» եւ «Սի-Ջի սոլյուշնս գլոբալ հոլդինգ քամփնի» ընկերությունների միջև:
- «Տաթևեր» ճոպանուղու «Հալիժոր» կայանի հարակից տարածքում հունիսի 6-ին անցկացվեց «Ռեխարի խուզում» երկրորդ փառատոնը, որի հիմնական նախաձեռնողը «Տաթևի վերածնունդ» ծրագիրն իրականացնող «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» հիմնադրամն էր:
- Հունիսի 20-ին Գորիսի Գրիգոր Տաթևացու հրապարակում հանդիսավորությամբ նշվեց ՀՀ պաշտպանության նախարարության 1-ին բանակային կորպուսի կազմավորման 19-ամյակը:
- Սկսվեց Մ2-Շաքե-Սիսիան-Դաստակերտ-Ցղունի համալսարանական նշանակության ճանապարհի (37 կմ երկարությամբ) հիմնադրոգումը:
- Կապանի արվեստի պետական



Դեկտեմբերի 6-ին Սյունիքը քվեարկեց ՀՀ սահմանադրության փոփոխությունների օգտին (քվեարկությանը մասնակցեց 66916 հոգի՝ 61,14 փոկոսը, նրանցից «այո»-ի օգտին քվեարկեց 47926-ը՝ 71,62 փոկոսը):



Հունիսի 5-ին Սիսիանում տեղի ունեցավ համահայկական «Ծաղկի տոն» փառատոնը, որն իրականություն դարձրեց Սյունիքի մարզի հաշմանդամների «Խարիսխ» հասարակական կազմակերպությունը՝ Հայաստանում ԱՄՆ դեսպանատան ֆինանսավորմամբ:

- քոլեջը դարձավ 50 տարեկան:
- Հունիսի 4-ին Գորիսում անցկացվեց «Սյունիքի բարիքներ» փառատոնը՝ «Արեւի փառատոն» հիմնադրամի աջակցությամբ եւ Գորիսի քաղաքապետարանի նախաձեռնությամբ:
- Նորավանդում նոյեմբերի 25-ին բացվեց հուշաղբյուր-կոթող՝ նվիրված Արցախյան հերոսամարտում զոհված համազյուղացիներին:
- Նախագահ Սերժ Սարգսյանը դեկտեմբերի 13-ին Սյունիքի մարզպետի եւ մարզպետարանի պատասխանատուների մասնակցությամբ խորհրդակցություն է անցկացրել Սյունիքի մարզի 2014 եւ 2015թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածի սոցիալ-տնտեսական իրավիճակի, առկա հիմնախնդիրների, գերակայությունների եւ զարգացման ծրագրերի քննարկման նպատակով:

**Նորածն ու հարմարավետ սենյակներ, ջերմ ու հյուրընկալ մթնոլորտ, բարձրակարգ սոփասարկում, լիարժեք հանգիստ**



**ՏԵՂԵՂՆՆՈՒԹՅՈՒՆ**  
**հյուրանոցային համալիր**

Հասցեն՝ քաղաք Սիսիան, Սիսական փ. 29  
 Հեռ.՝ (տնօրեն, ֆաքս) (3742832) 45-00  
 Բջջ.՝ (37491) 48-16-06  
 Հյուրանոց՝ (3742832) 66-00  
 Ռեստորան՝ (3742832) 56-00  
 Էլփոստ՝ info@lalahotel.am  
 Կայք՝ www.lalahotel.am



1, 2, 3 եւ 4 (ընտանեկան) տեղանոց սենյակներ, լյուքս համարներ: Կենտրոնացված ջեռուցում, հեռուստացույց, սառնարան, մշտական տաք եւ սառը ջուր, լողախցիկներ: Ինտերնետ կապ, բար, շոգեբաղնիքներ (որտեղ իր ծառայություններն է առաջարկում փորձառու մեստրոլը), անվճար ավտոկանգառ: Հյուրանոցի մեկ համարի գինը, կախված մահճակալների քանակից եւ սենյակի կարգից, 10 000-35 000 դրամ, ներառյալ նախաճաշը: Մշտական հաճախորդների համար գործում են զեղչեր: Գործում է բարձրակարգ ռեստորան՝ կենդանի երաժշտությամբ, ժամանակակից տեխնիկայով եւ տեսածայնային էֆեկտներով: Հմուտ խոհարարն առաջարկում է հայկական ավանդական եւ այլ ճաշատեսակներ՝ զեղեցիկ ու ճաշակով ձեւավորած մատուցմամբ:

«Լալաներ»-ն առաջարկում է ոչ միայն հյուրանոցային սպասարկում, այլեւ տուրիստական եւ բիզնես ծառայություններ: Փորձառու գիդի ուղեկցությամբ ձեր շրջագայություններն ավելի հետաքրքիր կդառնան: «Լալաներ»-ը կազմակերպում է նաեւ տարաբնույթ ավանդական, ինչպես նաեւ ըստ այցելուների նախասիրությունների, մշակութային, ժխական եւ ժամանցային միջոցառումներ: «Լալաներ» նորակառույց համալիրում կգործեն նաեւ մարզադահլիճ, միստերի դահլիճ եւ մանկական կենտրոն: «Լալաներ»-ը ձեր օրն անմոռաց, իսկ տոնակատարություններն ավելի հիշարժան կդարձնի:

**«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի Կապանի մասնաճյուղ**



1997թ. ապրիլի 3-ից գործում էր որպես «ՀՊՃՀ Կապանի կրթահամալիր» պետական բյուջետային հիմնարկություն, որ 2015թ. վերանվանվեց «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի Կապանի մասնաճյուղ:

**Մասնաճյուղում գործում են հետևյալ մասնագիտությունները՝**

- Տեղեկատվական տեխնոլոգիաներ (առկա եւ հեռակա)
- Ինֆորմատիկա եւ կիրառական մաթեմատիկա (առկա)
- Ձեռնարկությունների տնտեսագիտություն եւ կառավարում (լեռնամետալուրգիայի ճյուղում) (առկա եւ հեռակա)
- Օգտակար հանձնների հետախուզում եւ մշակում (առկա եւ հեռակա)
- Մետալուրգիա եւ մյուս մագիտություն

(առկա եւ հեռակա)

- Հիմնարկություն, շինարարական իրերի եւ կառուցվածքների արտադրություն (առկա եւ հեռակա)
- Փոխադրումների եւ ճանապարհային երթեւեկության կազմակերպում եւ կառավարում (հեռակա)

Մասնաճյուղում դասավանդում է 43 դասախոս, որից 14-ը՝ գիտական աստիճան ունեցող, ընդ որում 2-ը՝ գիտությունների դոկտոր: Ուսուցումը կազմակերպվում է ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած լաբորատորիաներում. գործում է 10 լաբորատորիա, որից 3-ը՝ ժամանակակից տեխնոլոգիաներով արդիականացված, որ թե դասախոսներին, թե ուսանողներին հնարավորություն է տալիս զբաղվել նաեւ գիտահետազոտական աշխատանքով: Գործում է հեռավար ուսուցման երկու լսարան: Համագործակցում է շուրջ 22 հիմնարկ-ձեռնարկությունների հետ: Առկա է զեղչերի ճկուն համակարգ՝ բարձր առաջադիմությամբ եւ սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողների համար, ինչպես

նաեւ մասնաճյուղի հովանավորների կողմից կատարվում է ուսման վճարների մասնակի կամ լրիվ փոխհատուցում: Իրականացվում են լրացուցիչ կրթական ծրագրեր: Մասնաճյուղը ընդգրկված է Tempus «Արտադրական համագործակցություն եւ հեռավար ու վիրտուալ գործիքամիջոցների վրա հիմնված ստեղծագործ ճարտարագիտական կրթություն» նախագծում: Նախատեսվում է գործարկել «Մոբայլ լուծումների» լաբորատորիան, որտեղ կգործի նաեւ Սյունիքի մարզի դպրոցականների համար ճարտարագիտական լաբորատորիա: Մարզի տարածաշրջանի որոշ քոլեջների բարձր առաջադիմությամբ շրջանավարտները հնարավորություն ունեն մասնաճյուղում երկրորդ կուրսից շարունակել ուսումը: Մասնաճյուղը համալսարանի օժանդակությամբ շարունակում է ակտիվորեն մասնակցել Բոլոնիայի գործընթացի հայաստանյան զարգացումներին:

# Պատուհան բացված գրքերի աշխարհին

**«Օ՛, գրքերի աշխարհը-տիեզերք է անեզր».** չարենցյան ծնակերպումն այժմեական է լինելու բոլոր ժամանակներում, այլ բան է, թե ինչպես պիտի ճամփորդել անեզր այդ տիեզերքում:

Ի սկզբանե դրանում օգնել են գրադարանները, իսկ երբ վերջիններս արդիականացվում են ժամանակակից տեխնոլոգիաներին համահունչ, գրքերի աշխարհի հետ հաղորդակցումն ավելի դյուրին է դառնում:

Բացե՛ք փակագծերը: Դեկտեմբերի 10-ին Կապանն ունեցավ ժամանակակից էլեկտրոնային գրադարան: Իսկ ամեն ինչ սկսվեց նրանից, որ 2013թ. դեկտեմբերին «Քաունթերփարթ ինթերնեշնլ» կազմակերպության հայաստանյան գրասենյակի հայտարարած տեղական ինքնակառավարման մարմինների խրախուսման դրամաշնորհային ծրագրի մրցութային փուլին մասնակցելու համար Կապան համայնքի եւ համայնքային ակտիվ խմբի կողմից ներկայացվեց «Էլեկտրոնային

Բացման արարողության մասնակիցները շրջեցին գրադարանի սրահներում, ծանոթացան այդտեղ ներդրված տեխնոլոգիաներին, առկա հնարավորություններին: Ումանք էլ գրադարակից վերցնում էին պատահած գիրքը, ասես ի հեճուկս նոր տեխնոլոգիաների ծանոթանում բովանդակությանը, հիշում դպրոցական տարիները: Գրադարանն ունի հարմարավետ սրահներ տարբեր հանդիպումների, միջոցառումների, վերապատրաստումների համար, նաեւ ֆիլմերի եւ այլ տեսանյութերի դիտումների հնարավորություն:

Շնորհավորանքի խոսքում Կապանի քաղաքապետ Աշոտ Չայրապետյանը մասնավորապես նշեց, որ լավագույն գաղափարը կմնա սոսկ այդպիսին, եթե չլինեն դրա իրականացման օժանդակողներ: Այս համատեքստում համայնքի ղեկավարը երախտագիտություն հայտնեց «Էլեկտրոնային գրադարան» ծրագրում ներդրում ունեցած անձանց եւ կազմակերպություններին: Քաղաքապետը նաեւ շնորհակալագրեր հանձնեց Հրաչ Ջաբրայանին, Հա-

թե այն ինչ տվեց Կապանին: Տեղեկացա, որ գրադարանն այսօր 4500 ընթերցող ունի, տարիներ հետո այդ թիվը կկրկնապատկվի, կեռապատկվի, սրանում չեմ կասկածում», – ասաց մարզպետը:

Էլեկտրոնային գրադարանի դերն արժեւորեցին Հրաչ Ջաբրայանը, Սվետլանա Գեւորգյանը, «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի Կապանի մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատար Լեռնիկ Պետրոսյանը: Նրանք իրենց խոսքում շեշտեցին այն միտքը, որ էլեկտրոնային գրադարանը տեղեկատվական աղբյուրներին հաղորդակցվելու մեծ հնարավորություն է ընձեռում եւ երախտագիտություն հայտնեցին գործը նախաձեռնողներին, իրականացնողներին եւ օժանդակողներին: Օրվա խորհրդի առիթով օրհնանքի խոսք հնչեցրեց Կապանի հոգեւոր հովիվ Կահան քահանա Հեթոյանը:

**«Շնորհավորում եմ այս գեղեցիկ հաստատության վերագործնքի առիթով, – ասաց հայր Կահանը, – մինչ վերանորոգումն այցելել եմ գրադարան, օգտվել նրա ֆունդից եւ այսօր, տեսնելով նորովի, վերանորոգված, լուսավոր, ուզում եմ ուրախությունս ձեզ հաղորդել: Քանզի հանապազօրյա հացից առավել կարիք ունենք հոգեւոր սննդի: Եվ այդ հոգեւոր սնունդը լրացնում է գիրքը: Ինչպես Պողոս առաքյալն է ասում՝ ամեն մի գիրք էլ Աստվածաշունչ է, ուրախ եմ, որ Կապանի ընթերցասեր հասարակությանը եւս մեկ անգամ առիթ է տրվում լայնորեն շփվելու գրքի հետ: Ահա մի գոյություն ունեցող Կապանում, որտեղ մարդիկ այցելելով, վատահաբար կգտնեն այն հարցադրումների պատասխանները, որոնք կփնտրեն, եւ վստահ եմ, որ նրանց երկրորդ ընտանիքի պես այստեղ կընդունեն»:**

«Էլեկտրոնային գրադարան» ծրագիրն իրականություն դարձավ նաեւ բարերարների շնորհիվ. դրա ընդհանուր արժեքը մոտ 76,3 մլն դրամ է եւ իրականացվել է համայնքային բյուջեի, «Դանդի փրիշս մեթալս Կապան» ՓԲ ընկերության, «Քաունթերփարթ ինթերնեշնլ» կազմակերպության եւ Հայաստանի ամերիկյան համալսարանի հետ համատեղ: Ամենախոշոր ներդրումը՝ 40 մլն դրամ, կատարել է «Դանդի ՓՄԿ» ՓԲԸ-ն, համայնքի ներդրումը մոտ 30 մլն դրամ է:

Վերանորոգման աշխատանքներին զուգընթաց՝ 2014թ. ամռանը Կապանի ակունքագրադարանային միավորման 10 աշխատակից մասնակցեց «Քաունթերփարթ ինթերնեշնլ» կազմակերպության եւ Հայաստանի ամերիկյան համալսարանի Փափագյանի անվան գրադարանի կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներին: Գրադարանավարները ձեռք բերեցին անհրաժեշտ գիտելիքներ եւ հմտություններ՝ «ԿՈՂԱ» գրադարանի ծրագրով ավտոմատացված ծառայություններ մատուցելու համար: Վերանորոգման աշխատանքներին զուգընթաց՝ վերապատրաստում անցած գրադարանավարները սկսել են գրքերի էլեկտրոնային կատալոգի ստեղծման աշխատանքները եւ մոտ 20 հազար կտոր գրականության թվայնացումը, որն այժմ էլ ընթացքի մեջ է: Մոտ ժամանակներս նախատեսվում է գրադարանի անդամակցումը Հայաստանի էլեկտրոնային գրադարանների կոնսորցիումին, ինչը հնարավորություն կտա էլեկտրոնային տարբերակով օգտվելու մայրաքաղաքի եւ այլ գրադարանների պահոցներից:

**ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ**



Էլեկտրոնային գրադարանի մանկական սրահում 2015թ. դեկտեմբերի 24-ին փոփոխված առաջին միջոցառումը: Հյուրերը Կապանի N4 ՆՈՒՅ-ի ավագ Ախաբի սաներն էին

գրադարան» ծրագիրը՝ միտված գրադարանային համակարգի՝ որպես համայնքի ենթակառուցվածք, գործունեության եւ մատուցվող գրադարանային ծառայության որակի բարելավմանը: Ընդ որում՝ ծրագրով նախատեսվում էր «Կապանի ակունքագրադարանային միավորում» ՀՈԱԿ-ի մշակույթի կենտրոնում տեղակայված մանկական գրադարանի 370 քմ տարածքը վերանորոգել եւ վերակազմավորել ժամանակակից էլեկտրոնային գրադարանի: Դրա հիմնադրման աշխատանքները սկսվել են 2013-ի աշնանը, շինարարությունը՝ 2014թ. մարտից:

Էլեկտրոնային գրադարանի բացմանը մասնակցում էին Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը, «Դանդի փրիշս մեթալս Կապան» ՓԲԸ գլխավոր տնօրեն Հրաչ Ջաբրայանը, «Քաունթերփարթ ինթերնեշնլ» հայաստանյան գրասենյակի կարողությունների զարգացման տեխնիկական խորհրդատու Մարիա Հարությունյանը, ճարտարապետ Տիգրան Մելիքյանը, մարզկենտրոնի կրթօջախների տնօրեններ, գրադարանային գործի նվիրյալներ, քաղաքապետարանի ենթակառուցվածքի հիմնարկների ղեկավարներ, գրասերներ, բազմաթիվ կապանցիներ:

յաստան Ստեփանյանին, Մարիա Հարությունյանին եւ Տիգրան Մելիքյանին, իսկ ծննդյան 75-ամյակի կապակցությամբ եւ գրադարանային գործում ներդրած ավանդի համար՝ Կապանի «Ակունքագրադարանային միավորում» հիմնարկի տնօրեն Սվետլանա Գեւորգյանին:

Բարենախաբանքի խոսքում Հայաստան Ստեփանյանը հույս հայտնեց, որ նորաստեղծ էլեկտրոնային գրադարանը կդառնա ոչ միայն տեղեկատվական կենտրոն, այլեւ կլինի մի հարթակ երկխոսության համար, որտեղ տեղական իշխանությունները համայնքի բնակիչների, քաղաքացիական կառույցների, մյուս կազմակերպությունների հետ կընճարկեն երկուստեք շահագրգռություններ կայացնող խնդիրներ եւ կկայացնեն հիմնավորված եւ արդյունավետ որոշումներ: Նա գրադարանին մանկական գրքեր նվիրեց:

Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը նորաբաց գրադարանը համեմատեց լուսամուտի հետ՝ բացված գրքերի աշխարհին, հայտնելով, որ այն հատկապես կնպաստի երիտասարդության զեղազիտական եւ կրթական դաստիարակությանը: **«Մինչ այժմ մեր մեծերի գործունեությունը գրադարանների միջոցով է հասու եղել երիտասարդ սերնդին, իսկ այս մի գրադարանն ընդլայնում է նրա ճանաչողության դաշտը: Մի տասը-քսան տարի հետո ենք հստակ արձանագրելու,**



## Մեղրու քաղաքապետ Արշավիր Հովհաննիսյանը 50 տարեկան է

«Այունյաց երկիր» թերթի խմբագրակազմը շնորհավորում է Մեղրու քաղաքապետ Արշավիր Հովհաննիսյանին՝ ծննդյան 50-ամյակի կապակցությամբ: Մաղթում ենք քաջառողջություն, անձնական երջանկություն, աշխատանքային հաջողություններ՝ ի բարօրություն Այունյաց աշխարհի հարավային բերդաքաղաք Մեղրու:

## Բարի առաքելությունը շարունակվում է



**Արթուր Ստեփանյանը, ով, Քաջարանի սոցիալապես անապահով ընտանիքներից, հաշմանդամներից եւ ծնողազուրկ երեխաներից ընտրելով 15 հոգու, կազմակերպել էր ուխտագնացություն Տաթևի վանական համալիր, Նոր տարվա նախօրեին հանդես եկավ հերթական բարեգործությամբ:**

Ուխտագնացության մասնակից 15 հոգին այս անգամ ստացան Ամանորի նվերներ:

Արթուր Ստեփանյանը սեփական նախաձեռնությամբ ու միջոցներով կազմակերպեց նվերների հանձնումը՝ ներկաներին պարզեցնելով հաճելի պահեր եւ, որ ամենակարևորն է, անհրաժեշտ ուշադրություն: **«Նախորդ անգամ կատարած աշխատանքը բարձր գնահատվեց ժողովրդի կողմից, որ ինձ համար ամենամեծ ու կարևոր գնահատականն է: Մեզ հրավիրել են Վեդի՝ Փառքի տարածք այցելության: 2016թ. այդ ծրագիրը նույնպես իրականություն կդարձնենք»**, – նշեց Ա.Ստեփանյանը եւ շնորհակալություն հայտնեց այն վարորդներին, ովքեր իրենց մեքենայի ապահովագրությունը կատարում են «Նաիրի ինչուրան» ընկերության Քաջարանի մասնաճյուղում:

Շնորհավորելով ներկաներին տոների կապակցությամբ՝ Արթուր Ստեփանյանը նրանց մաղթեց առողջություն, հաջողություն, իսկ մեր երկրին՝ խաղաղություն:

Քաջարանի բնակիչ Վիլյուշա Խաչատրյանը, ով խորհրդային տարիներին լեռնագործների պատգամավորն է եղել կուսակցական եւ խորհրդային բարձրագույն համաժողովներում, բարձր գնահատելով

Արթուրի նմանատիպ աշխատանքները, նշեց, որ բարեգործությունը մարդկային վերաբերմունք է, որ անհրաժեշտ է բոլորին: Նա նույնպես շնորհավորեց ներկաներին տոների առթիվ, իսկ Արթուրին մաղթեց, որ հնարավորություններն օրեցօր ավելանան, որպեսզի կարողանա ավելի շատ նմանատիպ գործեր կատարել:

Քաջարանի հոգեւոր հովիվ տեր Շիրակ քահանա Խանոյանը նշեց. **«Ինչպես «Աստվածաշունչ»-ն է ասում՝ մեկը մյուսին անցք եղբայրասիրության մեջ: Թող բարեգործությունը որպես վարակիչ հիվանդություն տարածվի, եւ մարդիկ ընդօրինակեն, բայց ոչ թե ի ցույց ամենքի, մարդկանց արքային թող փնջելու համար, այլ սրտանց բարի գործ կատարելու, մարդկանց օգտակար լինելու եւ նրանց փոքր-ինչ ուշադրության կենտրոնում պահելու համար»:** Տեր Շիրակը նույնպես փոքրիկ նվերներ հանձնեց՝ աղոթասեր, շարականագիր Ներսես Շնորհալու աղոթքների գրքուկը, որ կոչվում է «Հավատով խոստովանում եմ», եւ Մարիամ Աստվածածնի թագադրության պատկերով սրբապատկեր:

Շնորհավորելով ներկաներին, ողջ հայ ժողովրդին՝ տեր Շիրակ քահանա Խանոյանը մաղթեց, որ համբերատարորեն ու աղոթքով հաղթահարեն բոլոր դժվարությունները: **«Դժվարությունից ոչ թե գլուխ խոնարհել, այլ հաղթանակած դուրս գալ, ինչպես Քրիստոսն է ասում, որքան շատ լինենք բաժնեկից՝ չարչարանքներին, այնքան շատ պիտի մխիթարությանը բաժնեկից լինենք: Ընկճվելը, թուլանալը միշտ էլ կա, բայց դրանց դեմ պիտի խիզախաբար մարտնչել եւ դուրս գալ հաղթանակած: Թող Աստված օրհնի համայն հայությանը, որ կարող լինի իր պես անխոնջ, անմոռն զիմակայելու եւ արտաքին, եւ ներքին բոլոր խարդավանքներին: Թող Բեթղեմեյան աստղը ծագի հայոց երկնականաբար եւ մեր ժողովրդին տանի դեպի փրկություն, դեպի Փրկիչ»**, – իր շնորհավորական խոսքում նշեց հոգեւոր հովիվը:

Ներկաները նույնպես շնորհակալություն հայտնեցին պարբերաբար իրենց ուշադրության կենտրոնում պահելու համար:

**ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# Քաջարանի թիվ 1 միջնակարգ դպրոցը նշեց 50-ամյակը

Դպրոցի նախ-եջ 1 կին տնօրեն Վանյա Գալստյանը, ով ղեկավարել է դպրոցը 1967-2003թթ., հաճելի հիշողություններ ներկայացրեց՝ ցանկություն հայտնելով, որ դպրոցը վերանվանվի կամ հայ մեծագույն բանաստեղծ Եղիշե Չարենցի, կամ դպրոցի շրջանավարտ գոհված ազատամարտիկներից մեկի անունով: «Դպրոցի աշխատանքը շատ նման է դարբնի աշխատանքին: Դպրոցն այն դարբնոցն է, որի քուրայում կոփվում, ձեւ ու բովանդակություն է ստանում մարդը: Որքան ակտիվ է դպրոցը, այնքան ակտիվ է քաղաքի կյանքը: Մաղթում եմ բոլորիդ առողջությունն եւ լավագույն ավանդույթների շարունակում», – նշեց Վ.Գալստյանը եւ խոսքը եզրափակեց չարենցյան տողերով:

Դպրոցի վաստակաշատ ուսուցիչներից Մարտուն Անտոնյանը եւ Անժելա Գրիգորյանը հետաքրքիր դեպքեր պատմեցին իրենց աշխատանքային գործունեությունից՝ մտովի տեղափոխվելով իրենց համար երանելի տարիներ:

Շնորհավորական ուղերձ հնչեց նաեւ ներկայումս զինվորական ծառայության մեջ գտնվող զինվորի (դպրոցի շրջանավարտ) շուրթերից: «Այն ներուժը, ավյուրը, եռանդն ու սերը, որ համբառնվել է այս կրթօջախում, մի օր այս դպրոցին եւս կդասեն հայոց պատմության մեջ հարյուրամյակների, հազարամյակների պատմություն կերտած ուսումնական հաստատությունների շարքին: Բոլորս մի օր գնում ենք հանգստի, բայց կան մարդիկ, ովքեր հանգստանալու կարիք չունեն. այդ մարդիկ առաջնագծում կանգնած զինվորն ու մանկավարժն են: Վաստահ եմ, որ դպրոցի 100-ամյակին հավաքվելու ենք այստեղ եւ կրկին միմյանց շնորհավորելու անցած ուղու եւ փառահեղ տարեգրության համար: Թող Աստված պահպանի այս կենսատու, լուսատու օջախը», – իր շնորհավորական խոսքում մասնավորապես նշեց Քաջարանի քաղաքապետ Վարդան Գեւորգյանը: Նա նաեւ շնորհակալություն հայտնեց դպրոցի տնօրենությանը, կոմբինատի ղեկավարությանը մշտական աջակցության, իսկ ներկայաներին՝ տոնը միասին նշելու համար:

## Քաղաքապետը շնորհակալագրեր հանձնեց վաստակաշատ մանկավարժներին:

Մարզպետարանի կրթության, մշակույթի ու սպորտի վարչության պետ Դավիթ Ալեքսանյանը «շարադրություն» ընթերցեց դպրոցի եւ գիտելիքի դերակատարության վերաբերյալ, ինչպես նաեւ նշեց, որ կարելի էր տարեգրությունը չէ, այլ կատարված աշխատանքը, անցած ճանապարհը:

Այունիքի փոխմարզպետ Վարդան Դավթյանը, ողջունելով ներկայաներին, շնորհավորեց տոնի կապակցությամբ եւ հավաստիացրեց, որ իշխանությունները մշտական ուշադրության եւ հոգածության կենտրոնում են պահում դպրոցը:

Կրթական բնագավառում ներդրած ավանդի, մատաղ սերնդի դաստիարակության գործում ունեցած վաստակի, մանկավարժական երկարամյա անբասիր աշխատանքի համար Քաջարանի թիվ 1 միջնակարգ դպրոցի 50-ամյակի կապակցությամբ փոխմարզպետը մարզպետի շնորհակալագրով պարգևատրեց վաստակաշատ ուսուցիչներին:

Դպրոցի շրջանավարտ Վագեն Գարսայանյանը, շնորհավորելով հորեյանի առթիվ, մարքեց ամուր առողջություն, անասան բարեկեցություն, հարաճուն հաջողություններ եւ շնորհակալություն հայտնեց մանկավարժներին՝ իրենց կոչմանն արժանի լինելու, անմնացորդ նվիրումի ու տարիների անխնայ աշխատանքի, մատաղ

սերնդի դաստիարակության, հատկապես ռազմաօդային սիրական դաստիարակության համար:

Միջոցառումը եզրափակեց դպրոցի տնօրեն Անահիտ Գեւորգյանը, ով շնորհակալություն հայտնեց «ԶՊՄԿ» ՓԲ ընկերության ղեկավարությանը, մարզպետին, քաղաքապետին, ծնողական խորհրդին ու ուսուցչական համակազմին՝ մշտական աջակցության, ինչպես նաեւ բոլոր նրանց, ովքեր ներդրում են ունեցել այս միջոցառման կայացման մեջ: Ա.Գեւորգյանը հավաստիացրեց, որ դպրոցում յուրաքանչյուր ուսուցիչ մեծ պատասխանատվությամբ է կատարում իր առաքելությունը՝ հավելելով, որ յուրաքանչյուր խնդիր հնարավոր է լուծել, եթե առկա են նպատակ, նվիրում եւ արդյունավետ համագործակցություն:

Նշենք, որ միջոցառման ընթացքում երաժշտական համարներով հանդես եկան ոչ միայն դպրոցի աշակերտները, այլեւ Քաջարանի մանկական արվեստի դպրոցի ուսուցիչները: Իսկ ճեմասրահում կազմակերպված հյուրասիրությունը հանձնվել էր դասական երաժշտությամբ՝ Կապանի արվեստի պետական քոլեջի ներկայացուցիչների մասնակցությամբ:

### ԱՄՍԻՆ ԶԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



## Ի՞նչ է սպասվում Յրե Կապիկի փարում

### Խոյ

Խոյերը կարող են չվախենալ անհանգիստ տարվանից, որը հիշեցնում է ամերիկյան ատրակցիոներ, 2016 թվականը կերի միայն հարմոնիա եւ կայունություն: Կա միայն մեկ պայման, պետք է հրաժարվել ավելորդություններից: Այնպես մոտ աշխատանքային պայմանները ավելի վառ գույներ կստանան: Ոչ մի վեճ չի լինի: Ֆինանսական ոլորտում ամեն ինչ նույնպես հանդարտ է: Կյանքի համար կերիք: Գնարավոր են որոշ գործարքներ, որոնք տարվա ավարտին կվերջանան եւ կապահովեն Ձեր հետագա շահույթը: Առողջությունը նույնպես լավ կլինի:

### Ցուլ

Ցուլերի համար ժամանակն է հասկանալ՝ որն է առաջնահերթ: Կատարվելիքները շարունակվում են, զիջում՝ արագացվում: Աշխատանք շատ կլինի, բայց պարզեատրումը լինելու է շատ շուտ: 2016-ը կերի Ցուլերին արագ կարիերայի աճ: Անձնական կյանքում նրանց միաձուլում է սպասվում: Աշխատավարձը կբարձրանա: Իսկ առողջությունն այնքան էլ լավ վիճակում չի լինի, պետք է շատ ուշադրություն դարձնել առողջ սննդին:

### Երկվորյակներ

Գալիք տարում պետք է կատարել ցանկացած գործ: Միշտ փայլուն կկատարեք դրանք: Աշխատավայրում հաջողությունների պատճառով զույգերը կարող են քիչ ժամանակ տրամադրել մտերիմներին: Գունարը շատ կլինի: Անձնական կյանքում նրանց սպասվում է անակնկալների, ուշադրության տեղատարափ: Ով արդեն զույգ ունի, պետք է ջանք գործադրի, որպեսզի հարաբերությունները մնան նույնը: Առողջությունը ամբողջովին կախված կլինի իրենցից: Զանգիստը եւ հավասարակշռությունը կպաշտպանեն ամեն ինչից:

### Խեցգետին

Այս կենդանակերպի ներկայացուցիչները պետք է շատ աշխատեն, որպեսզի տարեվերջում ստանան հաճույք իրենց աշխատանքից: Անձնական կյանքում ամեն ինչ լավ կլինի: Միայնակները կգտնեն իրենց կեներին: Գունարային հարցերը շատ սուր չեն լինի: Ոսկե սարեր չեն խոստանում: Մի՛ վախեցեք վարկ վերցնել, որովհետեւ տարեվերջում կմոտեք դրանք: Տարին վտանգավոր է ստրեսներով եւ աշխատանքի մեծ բանակով:

### Առյուծ

Առյուծները առանձնապես ակտիվ չեն լինի աշխատանքի մեջ: Աշխատանքը հաճույք կպատճառի, եւ գումարի հետ խնդիրներ չեն լինի: Անձնական կյանքում Ձեզ փոփոխություններ են սպասում: Ձույգերի մոտ նոր փուլ կսկսվի: Առողջությունը շատ լավ վիճակում կլինի: Էներգիայի մեծ հոսք կունենան:

### Կույսեր

Կույսերը պետք է շատ աշխատեն, որ հասնեն հաջողության: Չնայած սրան, աշխատանքի մեջ պետք է շատ ուշադրություն դարձնել նոր ծանոթություններին: Անձնական կյանքում բանականությունը կհաղթի, բայց հնարավորություն կունենաք Ձեր կեսին հանդիպել: Առողջության մասին մտածել պետք է միայն այն կույսերին, ովքեր դեպրեսիաների մեջ հաճախ են հայտնվում: Դուք քնելու կարիք կունենաք, եւ դա էլ կօգնի Ձեզ առողջ լինել:

### Կշեռք

Աշխատանքի մեջ կշեռքների մոտ ամեն ինչ լավ կլինի, հնարավոր է պաշտոնի բարձրացում: Անձնական կյանքում ոչ մի նոր բան տեղի չի ունենա: Այն կշեռքները, ովքեր զույգեր ունեն, տարին շատ հանգիստ կանցկացնեն, իսկ ով չունի՝ պետք է սպասի տարեվերջին: Գնարավոր են թեթեւ առողջական խնդիրներ:

### Կարիճներ

Ամբողջ գալիք տարին լի է լինելու փոփոխություններով: Բոլոր նախապես պլանավորածին հասնելու համար պետք է աշխատել: Անձնական կյանքը եռալու է: Սեւ գիծը անցնելու է: Չնայած շատ աշխատանքին՝ նրանց առողջությունը շատ լավ է լինելու:

### Աղեղնավոր

Նոր տարին կերի աղեղնավորներին պաշտոնի բարձրացում: Կոլեգաների միջեւ սառնություն կլինի: Միայնակները պետք է ուշադրություն դարձնեն շրջապատին, միգրացիոն կենտրոնները կործանվեն: Նրանք ֆինանսների կարիք չեն ունենա եւ կկարողանան իրենց թույլ տալ թանկ բաներ գնել: Աստղերը խորհուրդ են տալիս ծովում հանգստանալ:

### Այծեղջյուր


Իրենք հանգիստ են անցկացնելու տարին: Աստիճանաբար պաշտոնի բարձրացում տեղի կունենա: Միայնակները փոփոխություններ չեն լինի, բայց ամուսնություն հնարավոր է: Եթե ֆինանսական հարցերում եւ անձնական կյանքում ամեն ինչ կարգին է, լուրեն պետք է ուշադրություն դարձնել առողջությանը:

### Ջրիս

Ջրիսները ավելի ակտիվ կդառնան: Տեղի կունենան փոփոխություններ: Նպատակներ պետք է ավելի շատ դնել, եւ դրանք կկատարվեն: Գնարաբերությունները շատ կըրտո կլինեն: Գնարավոր են ֆլիրտներ, բայց պետք չէ մոռանալ նախկին կապերի մասին: Նյարդային համակարգի մասին պետք է հոգ տանել, պետք է քիչ օգտագործել յուղոտ սնունդ եւ ալկոհոլ:

### Ձկներ

Չանգստությունն ու բարեկեցությունը սպասում են նրանց: Այս կամ այն ոլորտում լինելիս կենդանակերպի ներկայացուցիչները կզգան աստղերի օգնությունը: Ընտանիք ունեցողներին կայունություն է սպասվում: Նրանք, ովքեր դեռ չեն գտել իրենց կեսին, մեծ հնարավորություն ունեն գտնելու: Ժամանակն է հրաժարվել յուղոտ սննդից եւ մտածել սպորտի մասին: Նրանք ավելի շատ պետք է հանգստանան:



# Ֆիլմ Նվիրված Խորհրդային Միության հերոսին



«Տաքեի արծիվ» է կոչվում փաստագրական ֆիլմը, որ պատմում է Խորհրդային Միության հերոս Սուրեն Առաքելյանի մասին: Այն ստեղծվել է ՀՀ պաշտպանության նախարարի խորհրդական, գեներալ-լեյտենանտ Մուրադ Սարգսյանի նախաձեռնությամբ: Ֆիլմը նկարահանվել է հերոսի ծննդավայր Տաքե գյուղում, Գորիսում, նրանում օգտագործվել են պատերազմական շրջա-

նի վավերագրական կադրեր, Սուրեն Առաքելյանի մասին հուշեր են պատմում նրա համազգյուրացիները, եղբոր կինը:

Սուրեն Առաքելյանը 1933-ին գորակոչվել է բանակ, ծառայել հայկական հեծյալ գնդում: Մինչև պատերազմը

տերազմը աշխատել է Գորիսի ԵԳ բաժնում: 1941-1943թթ. 89-րդ հրաձգային դիվիզիայի կազմում մասնակցել է Կովկասի պաշտպանությանը: 1943թ. սեպտեմբերի 18-ին Նովոռոսիյսկի մոտ, Կուրբատսկայա բնակավայրի ազատագրման ժամանակ, սերժանտ Սուրեն Առաքելյանը, վիրավոր հրամանատարի պարտականություններն իր վրա վերցնելով՝ մարմնով փակել է ֆաշիստական զնդարի հրակնատը եւ ապահովել ստորաբաժանման առաջխաղացումը: Այդ խիզախության համար ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1944-ի մայիսի 16-ի հրամանագրով նրան հետմահու շնորհվել է ԽՍՀՄ հերոսի կոչում:

Ֆիլմի սցենարը գրել է Վրեժ Սարուխանյանը, տեքստը կարդում է դերասան Սերգուշ Բաբայանը, ռեժիսոր-օպերատորն Արթուր Դանիելյանն է: Ֆիլմը հովանավորել է Կապանի նախկին քաղաքապետ Արտուր Աբայանը, ֆիլմի ստեղծմանն աջակցել է «Տատնի» հանրային ջրերի գործարանը:

ՎԱՐՄ ՕՐԲԵՆԱՍ

**ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ** «Այունյաց երկիր» թերթի խմբագրակազմը ցավակցում է Առաջածորի գյուղապետ Դավիթ Մովսեսյանին՝ հոր՝ Միշա Մովսեսյանի մահվան կապակցությամբ:

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Հայտարարվում է մրցույթ՝ Սյունիքի մարզի Գեղամուշի միջնակարգ դպրոցի ֆիզիկայի, ֆիզկուլտուրայի ուսուցչի թափուր տեղի համար: Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

- Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ծե 1),
- Փաստաթուղթ (դիմում)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
- Անձնագրի պատճենը,
- Ինքնակենսագրություն,

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Կապանի թիվ 10 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի աշխարհագրություն (11 դասաժամ), ինֆորմատիկա (7 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

- Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ծե 1),
- Փաստաթուղթ (դիմում)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Գորիսի թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

- Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ծե 1),
- Փաստաթուղթ (դիմում)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
- Անձնագրի պատճենը,
- Ինքնակենսագրություն (ծե 4),

# Հոգու թելերով

## Մշակույթ

Դեկտեմբերի 18-ին Կապանի արվեստի պետական թանգում տեղի ունեցած երեկոն «Հոգու թելերով» խորագիրն էր կրում: Կրթօջախի տնօրեն Աշոտ Խաչատրյանի նախաձեռնությամբ կազմակերպված միջոցառման ժամանակ հնչեց դասական երաժշտություն եւ ոչ միայն: Քոլեջի դախիճի պատերին ներկայացված էին գեղանկարիչներ Մարինե Գրիգորյանի, Դավիթ Մարտիրոսյանի, Ռիզայանի Վիգեն Ավագյանի, Հասմիկ Գրիգորյանի աշխատանքները: Ա.Խաչատրյանը հանդիսականին ներկայացրեց օրվա խորհուրդը: «Պուշկինի անվան թանգարանի տնօրեն Իրինա Անտոնովայի անսահման սերը դասական երաժշտության եւ աշխարհահռչակ դաշնակահար Սվյատոսլավ Ռիխտերի սերը գեղարվեստի նկատմամբ առիթ եղան 35 տարի առաջ Մոսկվայում նախաձեռնելու «Դեկտեմբերյան երեկոներ» խորագիրը կրող համերգաշարը: Այդ միջոցառումներն անց էին կացվում Պուշկինի անվան կերպարվեստի թանգարանում՝ նպատակ ունենալով համատեղել արվեստի երկու տեսակները՝ երաժշտությունն ու գեղանկարչությունը, որոնք նույն երեկոյի ընթացքում լրացնում էին միմյանց: Ավանդական դար-

ծած երեկոների ընթացքում հանդես են եկել բազմաթիվ հայտնի երաժիշտ-կատարողներ, որոնք այսօր էլ շարունակում են ավանդույթը՝ անզուգական երաժիշտ, ալտահար Յուրի Բաշմետի ղեկավարությամբ: Աշոտ Խաչատրյանը հայտնեց նաեւ, որ տարիներ ի վեր հետադարձություններ չեն եղել երեկոները, փափագել է ինքն էլ կազմակերպել նման երեկոներ, ստեղծել մի միջավայր, որտեղ հնարավորություն կունենան ներկայանալու կապանցի ստեղծագործողներ, երաժիշտներ, գեղանկարիչներ, դերասաններ ու մտավորականներ: Երեկոյի ծրագիրը բազմազան էր, կապանցի երաժիշտների՝ արվեստի թուղթի դասախոսների եւ Կապանի երաժշտական եւ արվեստի դպրոցի դասատուների կատարմամբ հնչեցին Վիվալդիի, Շոպենի, Բրամսի, Ալբերտի, Յու. Վեյնյակի, Ա.Խաչատրյանի, Ստ.Ջրբաբայանի ստեղծագործությունները: Վաչիկ Համբարձումյանը (դուդուկ) եւ Աշոտ Խաչատրյանը (թավջութակ) կատարեցին Ալբերտի Զառուբայանի «Հորովելը» (փոխադրման հեղինակ՝ Ա.Խաչատրյան), որ հնչեց առաջին անգամ: Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի Մարիամ Հովհաննիսյանը ներկայացրեց Տեսնիճի «Ի՛նչն է ի՛նչն է ի՛նչն է» ստեղծագործությունը: Լուսինե Հարությունյանը, Կապանի Ալ.Շիրվանզադեի անվան պետադպրոցի դերասաններ Գայանե Վարդիկյանը, Արթուր Գաբրիելյանը հանդես եկան սամուցով (Համո Սահյան, Դանիել Վարուժան, Պարույր Սեւակ):

ՎԱՐՄ ՕՐԲԵՆԱՍ

**ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ**

**Ժենյա Երվանդի Մարտիրոսյան**

Կարճատեւ հիվանդությունից հետո կյանքի 78-րդ տարում երկրային կյանքին հրաժեշտ տվեց Քաջարանի հիվանդանոցի երկարամյա աշխատող, կենսաթոշակառու բուժքույր-մանկաբարձուհի Ժենյա Երվանդի Մարտիրոսյանը: Ծնվել է 1937թ. փետրվարի 22-ին Ղափանի շրջանի Ծավ գյուղում: Մանկությունն ու պատանեկությունն անցել են Բասուտա գետի ափին՝ Մթնածորի չքմալ բնության գոլում: Սովորել է Ծավի 7-ամյա դպրոցում, որն ավարտելուց հետո ընդունվել է Գորիսի բժշկական ուսումնարանը: 1957թ. ավարտել է բժշկական ուսումնարանը՝ մանկաբարձուհու մասնագիտությամբ եւ աշխատանքի նշանակվել Քաջարանի հիվանդանոցում: Ժենյա Մարտիրոսյանը եռանդուն եւ նվիրված աշխատող է եղել, միշտ հոգատար վերաբերմունք է ցուցաբերել մայրերի

եւ նրանց նորածին զավակների նկատմամբ, երիտասարդ մայրերին օգնել երեխաների խնամքի, հիգիենայի եւ կերակրման հարցերում: Սրտամոտ, ընկերասեր եւ բարեկամասեր անձնավորություն էր: Վայելել է աշխատանքային ընկերների եւ հարեւանների սերն ու հարգանքը: Ծնել էր դասիրարակել է իւրեացի զավակներ, ունի գեղեցիկ ընտանիք:

Ժենյա Մարտիրոսյանի հիշատակը միշտ վառ կմնա նրան ճանաչողների սրտերում:

**Մի խումբ ընկերներ**

**Այունյաց երկիր**

ՀԻՄՆԱԳԻՐ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՎԻՉ  
**«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՆԽԱՐԳ»**  
ՍԱՀՄԱՏՈՒԿ ՈՍՏԱՍՆԱՏՎՈՒԹՅԱՒ ԸՎԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝  
**ՍՍՎԵՆ ԱՆԵՍՍՆԱՆ**

Հասցե՝	Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝	(0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47:
Էլ. փոստ՝	syuniacyerkir@mail.ru
Էլ. կայք՝	www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր փճակով (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնուն տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Այունյաց երկրին» պարտադիր է:

ՊՆՏՈՒՆՆԱԿԱՆ ՏՎԱԿԱՐԿՈՒՄ ԵՆ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՆՅՈՒՑԵՐ: Գրանցման վկայական՝ 01Մ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2: Պետական աջակցություն՝ տարեկան 500 000 ՀՀ դրամ:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպագրմանը՝ 1781, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 12.01.2016թ.: